ԿՐԹԱԿԱՆ

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

*Հունիսի 6-ին, Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Գիորգի Ամիլախվարին հանրակրթական հաստատությունների ուսուցիչների հետ պարբերական հանդիպումների շրջանակներում աշխատանքային հանդիպում ունեցավ Թբիլիսիի հանրային դպրոցների շուրջ 200 մանկավարժների հետ:*



Նախարարը մանկավարժներին մանրամասն ներկայացրեց մասնագիտական կրթության սխեմայի առկա հիմնախնդիրներն ու հայտարարեց, որ ուսուցիչների պաշտոնական առաջընթացի աջակցության նպատակով, կրթության եւ գիտության նախարարությունը շարունակում է ուսուցիչների մասնագիտական զարգացման համակարգի վերանայման գործընթացը, որպեսզի առավելագույնս կատարելագործվի սխեմայում ուսուցիչների ներգրավման կարգը:

Հանդիպմանը խոսեցին նաեւ դասագրքերի բարելավման եւ աշակերտներին կողմնորոշված ուսումնական միջավայրի զարգացման աջակցության հարցերի մասին: Գիորգի Ամիլախվարու նախաձեռնությամբ, ընդհանուր կրթության ոլորտում առկա մարտահրավերների ժամանակին եւ արդյունավետ արձագանքման նպատակով, ուսուցիչների հետ հանդիպումները ողջ երկրի տարածքով ակտիվորեն կշարունակվեն:

# ԱՏԵՍՏԱՏՆԵՐԸ ԿՏՐՎԵՆ ՀՈՒԼԻՍԻ 3-ԻՑ

*Վրաստանի արդարադատության նախարարության պետական ծառայությունների զարգացման գործակալությունը հուլիսի 3-ից կսկսի ամբողջական հանրակրթությունը հաստատող պետական փաստաթղթի եւ ատեստատի տրամադրումը:*



Պետական ծառայությունների զարգացման գործակալության տեղեկատվության համաձայն, այս տարի երկրի ողջ տարածքում դպրոցն ավարտել է 47 306 XII դասարանցի:

Դիմորդները հայտը ներկայացնելուց հետո, 10-րդ աշխատանքային օրը անվճար կստանան պատրաստի վկայականներ: Փաստաթղթի համար անվճար կարելի է դիմել մինչեւ ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը: Վկայականն արագացված կարգով ձեռք բերելու դեպքում գանձվում է համապատասխան վճար:

Ամբողջական հանրակրթությունը հաստատող պետական փաստաթուղթը` ատեստատը, կարելի է ստանալ ինչպես բնօրինակ, այնպես էլ` էլեկտրոնային տարբերակով: Էլեկտրոնային ատեստատը բնօրինակի փաստաթղթի պատճենն է, որը բնօրինակի հետ նույն իրավական ուժ ունեցող էլեկտրոնային փաստաթուղթ է:

**ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

ՆՈՐ ԳԻՐՔ

# ԾԱՆՈԹ ՈՒ ԱՆԾԱՆՈԹ ԲՈԼՆԻՍ - ԽԱՉԵՆԸ

*Բոլնիս-Խաչեն գյուղի մասին շատերն են լսել, բայց քչերը գիտեն, թե ինչպես է նա ստացել Բոլնիս-Խաչեն անվանումը, քչերին է ծանոթ նրա անսովոր տարեգրությունը, որը հիշարժան ու ուսանելի են համարում ոչ միայն բոլնիսխաչենցիները, այլ նաեւ նրանք, ովքեր կարդացել են Արմեն Մանուչարյանի վերջերս լույս տեսած «Բոլնիս-Խաչեն» վերնագրով գիրքը:*



...Վրաստանի Քվեմո-Քարթլիի անտառների ու ձորերի մեջ ծվարած գեղատեսիլ Խաչենի մասին գիրք հրատարակելու շա՜տ ու շատ խաչենցիների անկատար փորձն իրականություն դարձրեց մասնագիտությամբ ինժեներ-շինարար, «Բոլնիս-Խաչեն» հայրենակցական-բարեգործական միության նախագահ (1991թ.), ծնունդով բոլնիսխաչենցի Արմեն Մանուչարյանը: Բնօրրանի մասին գրելու դրդապատճառն ինքնին մեկն է` ծննդավայրի անսահման սերն ու գյուղը հիմնած նախնիների եւ գյուղի նշանավոր զավակների հիշատակը հավերժացնելու ազնիվ ցանկությունը:

Գրքում հաճախ սրտացավությամբ ու նաեւ պատվախնդրությամբ են բացվում պատմության թնջուկները` ներկայացնելով գյուղի անցյալն ու ներկան: Բովանդակությունը ներկայացնում են «Առաջաբան», «Աշխարհագրական դիրքը», «Պատմական ակնարկ», «Կենցաղը եւ սովորույթները», «Բնությունը եւ կլիման», «Գյուղի դպրոցը», «Տարածաշրջանի ազգաբնակչությունը», «Բոլնիսխաչենցիները Հայրենական մեծ պատերազմում», «Հայտնի բոլնիսխաչենցիներ» եւ այլ ենթավերնագրերը:

... Իսկ Բոլնիս-Խաչենը հայտնի զավակներ շատ ունի եւ հատկապես նորանկախ Հայաստանի պատմության մեջ. քաղաքական ու պետական ականավոր գործիչներ Գեւորգ Վարդանյան, Անուշավան Դանիելյան, Ամամ եւ Ժաննա Անդրեասյաններ, Շահեն Սողոմոնյան, Աշոտ Շահբազյան, Հայկ Մինասյան...

Մեր մեծ դասականի կյանքի էջերին է նվիրված «Ղազարոս Աղայան» գլուխը` գրողի կյանքի մեզ մինչ այդ անհայտ մանրամասներով ու լուսանկարներով:

Մանուչարյանը մեզ ճանաչել է տալիս տեղական որոշ սովորույթներ փոխառած, վրացական գործիքներ ու բառեր օգտագործող, բայց իր նիստուկացին անդավաճան վերաբնակված խաչենցու բարոյահոգեբանական նկարագիրը: Պապենական արհեստները ժառանգած վարպետ դուրգարների, հյուսների, բրուտների, որսորդների, ինչպես նաեւ կրթության ու գիտելիքի լույսը մարդկությանը ծառայեցնող անհատների անծանոթ ու գունեղ աշխարհը, որն ունի իր առանձնահատուկ կերակրատեսակները, թաղման իր արարողությունները, երբ արվում է հնարավորը սգավորների վիշտը թեթեւացնելու համար: Այստեղ ապրում են հանրությանը օրգանապես ձուլված ու, միեւնույն ժամանակ, ընդհանուրից զատվող անհատականություններ, որ ապրում են նախնիներից ժառանգած Մարդկային ու Սիրո օրենքներով: Խաչենցին պատրաստ է սատարել մերձավորին, պաշտպանել թույլին, լինել հայրենիքի անձնազոհ մարտիկը: Նրան բնորոշ են նաեւ ընդգծված տաքարյունությունը, անզիջողականությունը, գծեր, որ հաճախ հասցնում են թունդ կռիվների, սակայն հեղինակի հավաստմամբ, երիտասարդ սերունդը ողջախոհությամբ վերացնում է այդ տհաճ երեւույթները:

Հեղինակի անընդհատ ներկայությունը` բնաշխարհին նվիրված պատկերներում, պատմության փաստագրության, գյուղական կենցաղային մանրամասներում` համեմված բոլնիսխաչենցու հումորով ու խորիմաստ ընկալումներով, առինքնում եւ խորհելու առիթներ են տալիս ցանկացած տարիքի ընթերցողի: Գիրքն ընթերցողին կզարմացնի պատմական փաստերի առատությամբ, տեղանունների հարստությամբ ու հազվադեպ լուսանկարների ներառումով (շուրջ` 150 նկար):

Հին ու նոր գյուղի սահմանագծում ապրող այս խիզախ մարդկանց ապրումներն ու ձգտումները, Արմեն Մանուչարյան հեղինակի նախանձախնդիր միտումների շնորհիվ հասկանալի, հոգեհարազատ եւ ընդունելի են դառնում ընթերցողին, եւ նա հավատում է այդ աշխարհի շարունակականությանը:

**ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ**

ՈԼՈՐՏ

# ԱՆԱ ՄԻՔԱՁԵ. «ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԳՐԵԹԵ ԲՈԼՈՐԸ, ՈՎՔԵՐ ԿՈՎ ՈՒՆԵՆ, ՊԱՆԻՐ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ, ԲԱՅՑ...»

## ԵՐԿՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՊԱՆՐԱԳՈՐԾՆԵՐԻ ԹՎՈՒՄ ԵՆ ՄԱՔՍԻՄ ԳԻԼՈՅԱՆԸ, ՄԵԼՍ ԲԴՈՅԱՆԸ, ԱՐԱՐԱՏ ՂԱԶԱՐՅԱՆԸ...

(Սկիզբը` 4-րդ էջում)

***- Հետաքրքիր է, մեր նախնիներն ինչպե՞ս էին ապահովում մանրազերծված միջավայրը: Պատմությունը նման փաստեր պահպանե՞լ է:***

- Պանիր պատրաստելիս` արտադրողները նախկինում իրենց ձեռքերը մինչեւ արմունկը սափրում էին: Նրանք քաջ գիտակցում էին, թե ինչ զգայուն հումքի հետ գործ ունեն: Ցավոք, այդ մասին մոռացել են, ըստ երեւույթին, շահույթ ստանալու ձգտումը գերազանցել է մյուս զգացումներին:

***- Հավանաբար, ամենուրեք չէ, որ այդպես է...***

- Բնականաբար: Ուզում եմ հատկապես ընդգծել, որ պանրի արտադրության հարուստ ավանդույթներ ունեցող Ախալքալաքիի, Նինոծմինդայի, Ախալցիխեի, Ծալկայի պանրագործներն առանձնակի լրջությամբ են վերաբերվում արտադրանքի որակին, հնարավորինս պաշտպանում են հմուտ պանրագործների իրենց հեղինակությունը:

***- Ի՞նչ կասեիք Ձեր թվարկած շրջանների պանրագործների մասին:***

- Միանգամից նշեմ, որ այսօր եւս այդ շրջաններում պանրագործությանը առանձնակի ուշադրություն է հատկացվում: Ախալքալաքիում դեռեւս խորհրդային ժամանակներից հմուտ պանրագործի համբավ էր վայելում տեխնիկական գիտությունների թեկնածու Մաքսիմ Գիլոյանը: Ախալքալաքիի յուղապանրագործարանը նրա օրոք իր որակական եւ քանակական ցուցանիշներով առաջատարներից մեկն էր: «Գործարանային պանրի արքա» ճանաչված Մաքսիմ Գիլոյանի թողարկած արտադրանքը մեկ անգամ չէ, որ արժանացել է պանրի միջազգային փառատոների մրցանակների: Պանրի արտադրության կազմակերպման, որակյալ կաթնամթերքի թողարկման գործում նշանակալի արդյունքների հասան նաեւ հանրապետական եւ միջազգային տարբեր փառատոներում հաղթող նինոծմինդացիներ Մելս Բդոյանն ու Արարատ Ղազարյանը:



Մաքսիմ Գիլոյան



Մելս Բդոյան



Արարատ Ղազարյան

Պետք է հաշվի առնել նաեւ այն հանգամանքը, որ վերոնշյալ շրջանների մարգագետինները մեծ մասամբ ալպիական են, հետեւաբար, տեղում ստացվող կաթի յուղայնությունը շատ ավելի բարձր է: Բնականաբար, բարձր է նաեւ այդ հումքից պատրաստված պանրի որակը:

***- Իսկ ի՞նչ կասեիք պանրի գների մասին, որքանո՞վ են նրանք համապատասխանում ինքնարժեքին, պանրի պատրաստման համար կատարված աշխատանքներին:***

- Պանրի գինը շարունակում է մնալ բացարձակապես չկարգավորված: Բոլորս գիտենք, որ գարնանը, երբ աճում է խոտը, պանիրը էժանանում է, իսկ ձմռանը` թանկանում: Այսինքն, Վրաստանում գործում են ամառային եւ ձմեռային գներ: Պատճառն այն է, որ Վրաստանում անասնապահությունը դեռեւս չի հասել քաղաքակիրթ աշխարհի երկրներում հաստատված մակարդակին: Նման երկրներում կաթնամթերքի գինը տարվա եղանակների հետ ոչ մի կապ չունի: Այնտեղ ֆերմերները գիտեն, թե կոնկրետ արտադրանքի ինչ ծավալ պետք է հանձնեն պատվիրատուին:

Գործում է կաթ ձեռքբերող-արտադրող-շուկա-սպառող շղթան: Նորմալ պետության մեջ այդ շղթայի բոլոր օղակներն աշխատում են համաձայնեցված: Իսկ մեզանում նման բան չկա: Ոչ մի տրամաբանությամբ հնարավոր չէ պարզաբանել կաթի ձեռքբերման արտադրության եւ կաթնամթերքի պատրաստման համակարգը:

Վրաստանում վաճառվում է տարբեր տեսակի պանիր: Օրինակ, ներկա դրությամբ, Թբիլիսիում «Իմերուլի» պանիրը հնարավոր է գնել 14-16, «Սուլգունին»` 22-25, «Գործարանայինը»` 18-22 լարիով: Ամեն ինչ կախված է նրանից, թե որտեղ է վաճառվում այդ մթերքը:

Անհրաժեշտ է, որ պետությունը պանրի հետ կապված հիմնախնդիրը համարի առաջնահերթ եւ կոնկրետ քայլեր ձեռնարկի ոլորտի գործունեության կարգավորման ուղղությամբ: Հարկ է աջակցել անասնապահությանը, հակառակ դեպքում, մեր ազգային հարստությունը, հնագույն ավանդույթներն ու բարեխիղճ արտադրողի համբավն անհայտ կկորչեն:

*Զրուցեց ԼԱԴՈ ԳՈՒՐԳԵՆԻՁԵՆ*

# ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

## ՀՅՈՒՐ ԳՆԱԼԸ ՆՈՒՅՆՊԵՍ ԻՐ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒՆԻ...



*Այն, որ չգրված օրենքները երբեմն գրվածից ավելի հզոր են, փաստ է: Հավանաբար, նման չգրված օրենքներից մեկը հյուր գնալն է: Հետաքրքիր է՝ ի՞նչ է ասված այդ «չգրված օրենքում»:*
***Հ. ՆԵՐՍԻՍՅԱՆ***
***Թբիլիսի***

Պարզվում է՝ ոչ մի դեպքում չի կարելի դատարկաձեռն հյուր գնալ: Ահա, թե ինչու...

Խոսքն ամենեւին էլ տոների եւ ծննդյան օրերի մասին չէ, այլ սովորական օրերի: Պարզապես գոյություն ունեն կանոններ, որոնց պահպանումը հաջողություն է բերում: Դուք կարող եք թեկուզ առանց բարձրաձայնելու որեւէ մեկին բարի խոսք հղել, երջանկություն մաղթել: Լռությամբ ընծա մատուցելու այս ձեւը բավականին ազդեցիկ է:

Իսկ հյուր գնալիս անպայման, թեկուզ շատ չնչին նվեր մատուցելը չգրված կանոն է, որը պետք է պահպանել: Դա կարող է լինել 1 հատիկ ծաղիկ, բացիկ, որում գրված մաղթանքն ինչ-որ կերպ կարտահայտի ձեր վերաբերմունքը տանտիրոջ նկատմամբ: Այստեղ չափը էական չէ: Կարեւորը հոգուց բխող կամեցողությունն է: Հետեւաբար, դա կարող է նաեւ արտահայտվել տանտիրոջն ուղղված հաճոյախոսությամբ, որը կբարձրացնի նրա տրամադրությունը:

Ըստ հաջողության հրաշագործ կանոնի, որքան շատ եք տալիս, այնքան ավելի մեծ է ավելին ձեռք բերելու հավանականությունը: Եթե նույնիսկ ոչինչ չունեք տալու, դուք կարող եք մի քաջալերող խոսքով կամ ձեր օգնությամբ ժպիտ պարգեւել:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ԲՈՒԺՈՒՄ՝ ԳՈՒՅՆԵՐՈՎ



*Վերջերս «Վրաստանում» հոդված էիք տպագրել երաժշտության միջոցով բուժման մեթոդի մասին: Հետաքրքիր է՝ բուժման էլ ի՞նչ տարբերակներ կան:*
***Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ***
***Ախալքալաքի***

Դեռեւս հնուց մարդիկ նկատել են, որ գույները որոշակի ազդեցություն են գործում տրամադրության վրա եւ նույնիսկ հիվանդությունների դեմ են պայքարում:

Կարմիրն արյան մեջ բարձրացնում է հեմոգլոբինի մակարդակը. ամրապնդում իմունիտետը:

Նարնջագույնը բարելավում է ենթաստոմաքսային գեղձի աշխատանքը, մաքրում է անոթները, երիտասարդացնում, ցրում է դեպրեսիան:

Դեղինը խթանում է մտավոր գործունեությունը, նպաստում ողջ օրգանիզմի մաքրմանը:

Կանաչը ամրացնում է մկանները ու հյուսվածքները, բարելավում է տեսողությունը, հանում բրոնխների սպազմը, հանգստացնում է:

Երկնագույնը վերացնում է ցավը, բարելավում է քունը:

Կապույտը առողջարար ազդեցություն է գործում շնչառական օրգանների, վահանաձեւ գեղձի, վերքերի ապաքինման վրա:

Մանուշակագույնն իջեցնում է ջերմությունը, հանում է սթրեսը, օգնում անքնության, միգրենի եւ դեպրեսիայի դեպքում:

Սպիտակը ուժ է տալիս, ներդաշնակեցնում բոլոր գործընթացները, հանգստացնում է նյարդային համակարգը:

ԽՈՐՀՈՒՐԴ՝ ԸՆԹԵՐՑՈՂԻՑ

## ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏԵԼ ՏՆԱՅԻՆ ՊԱՂՊԱՂԱԿ

*Ամառային շոգերին սառը պաղպաղակն անփոխարինելի է: Ստորեւ ներկայացնում ենք «Վրաստանի» ընթերցող Սվետլանա Մուրադյանի տնային պաղպաղակ պատրաստելու խորհուրդը:*



**Բաղադրիչներ.** 2 բաժակ շաքարավազ, 1 լ կաթ, 100 գ կարագ, 1 թեյի գդալ օսլա, 5 ձվի դեղնուց:

**Պատրաստման եղանակը.** Կարագը գցել տաքացրած կաթի մեջ եւ հասցնել եռման աստիճանի: Մեկ այլ ամանի մեջ խառնել շաքարավազը, օսլան ու դեղնուցներն այնքան՝ մինչեւ ստացվի միատարր զանգված: Այնուհետեւ, մի քիչ կաթ ավելացնել, որի արդյունքում պետք է ստացվի ոչ թանձր թթվասերի նման զանգված: Այդ ընթացքում կաթն արդեն եռում է, եւ դրա մեջ պետք է քիչ-քիչ, անդադար խառնելով, բարակ շիթով ավելացնել դեղնուցով զանգվածը: Հասցնել եռման աստիճանի եւ, ամանը կրակից վերցնելով, դնել սառը ջրի մեջ: Այդ ընթացքում եւս անդադար խառնել, մինչեւ զանգվածը գոլանա: Թողնել, որ այն լրիվ սառչի: Պարբերաբար խառնել, լցնել կաղապարների մեջ եւ տեղավորել սառցախցիկում:

ՇՐՋԱՆԱՎԱՐՏ

## Ի՞ՆՉ ԱՆԵԼ ԴՊՐՈՑՆ ԱՎԱՐՏԵԼՈՒՑ ՀԵՏՈ

*Վաղ թե ուշ՝ այդ պահը գալիս է: Անցյալում է «Վերջին զանգը», եւ բոլորը հարցնում են քեզ՝ ի՞նչ ես պլանավորում անել դպրոցից հետո, որտե՞ղ ես սովորելու: Եթե դու արդեն կատարել ես քո ընտրությունը եւ որոշել ես հետագա կյանքիդ ուղին, շնորհավորում ենք քեզ եւ ցանկանում կանաչ ճանապարհ: Իսկ ի՞նչ անել նրանց, ովքեր դեռ չեն կողմնորոշվել: Ո՞ր ուղին ընտրել: Եթե դու փորձում ես գտնել այդ հարցի պատասխանը, այս հոդվածը քեզ համար է:*



**Եվ այսպես՝ ինչի՞ց սկսել, ինչպե՞ս կողմնորոշվել**

Դպրոցից հետո դու ունես մի քանի տարբերակ: Դու կարող ես միանգամից «մտնել մեծահասակների կյանք» եւ անցնել աշխատանքի, «դադար» վերցնել (տարկետում, «gap year»): Մեկ տարվա ընթացքում մի լավ մտածել ապագայի մասին, ծանոթանալ տարբեր բնագավառների հետ՝ ինքդ քեզ լավ ճանաչելու եւ հասկանալու՝ ի՞նչ ես ուզում անել քո հետագա կյանքում, ընդունվել համալսարան, այլ բարձրագույն ուսումնական հաստատություն կամ միջին մասնագիտական հաստատություն:

Բոլոր տարբերակներն ունեն ե'ւ առավելություններ, ե'ւ թերություններ

**1. «Մնաս բարով, ուսում, բարե'ւ, մեծահասակ կյանք»**

***Առավելություններ.*** Դու տարիներ չես ծախսում սովորելու վրա: Կարող ես անմիջապես անցնել աշխատանքի ամբողջ դրույքով եւ վաստակել քո ապրուստի միջոցները:

***Թերություններ.*** Ոչ բոլոր գործատուներն են վերցնում աշխատանքի առանց բարձրագույն կրթության (նաեւ աշխատանքային փորձի) երիտասարդների: Առնվազն պահանջվում է տեղեկանք, որ սովորում ես ինստիտուտում/ համալսարանում: Պետք է հստակ կողմնորոշվել, թե որ ուղղությամբ ես առաջ գնալու քո կարիերայում եւ զարգանալու, որպեսզի հետագայում ունենաս լավ պաշտոն ու գումար աշխատելու հնարավորություն:

**2. «Տարկետում»/Gap Year**

***Առավելություններ.*** Եթե դու դեռ չես կողմնորոշվել, թե ինչո՞վ ես զբաղվելու դպրոցից հետո, եւ ո՞ր ոլորտն է քեզ հետաքրքրում, սա ամենալավ տարբերակն է: Ի դեպ, այդպես անում են շատ երկրների երիտասարդներ: Դու կունենաս մեկ տարի, որի ընթացքում կզբաղվես քո ուզած գործերով՝ կաշխատես, կմասնակցես տարբեր դասընթացների, կմիանաս կամավորական շարժմանը, կճանապարհորդես եւ այլն: Դա քեզ կօգնի դառնալ ավելի հասուն անձնավորություն, կողմնորոշվել քո կյանքի հետագա ճանապարհի, ապագայի մասին ավելի ճիշտ եւ տեղեկացված որոշում կայացնելու համար:

Դու կարող ես օգտագործել այդ տարին քո գիտելիքների բացերը լրացնելու կամ առանձին ոլորտներում կատարելագործելու համար: Չե՞ս սիրում մաթեմատիկա կամ պատմություն: Մեկ տարին բավական է, որ դու մի լավ պարապես: Ցանկության դեպքում կարող ես գրանցվել որեւէ դասընթացի. նոր հմտությունները, նոր ծանոթությունները եւ փորձի ձեռքբերումը երաշխավորված են:

***Թերություններ.*** Ոչ բոլորն ունեն բավարար ֆինանսական միջոցներ «տարկետում» վերցնելու համար: Չէ՞ որ դասընթացները, սեմինարները, ճանապարհորդությունները պահանջում են միջոցներ, եւ քո փոխարեն ստիպված պետք է վճարեն ծնողներդ, ում դեռ պետք է համոզել այդ տարկետման անհրաժեշտության համար: Կամ պետք է փորձես աշխատանք գտնել՝ գոնե որոշ չափով ապահովելով քո ապրուստը:

Պետք է ունենալ կամքի ուժ, որպեսզի իզուր չվատնես այդ տարին, քանի որ ժամանակը շուտ է անցնում, եւ եթե դու չզբաղվես օգտակար գործով, ոչ մի օգուտ չես քաղի եւ պարզապես կկորցնես թանկ ժամանակդ:

**3. Շարունակել ուսումը**

***Առավելություններ.*** Դու ստանալու ես ինչպես ընդհանուր, այնպես էլ՝ մասնագիտական գիտելիքներ, որոնք քեզ թույլ կտան գլուխ հանել տարբեր ոլորտներից ու կպատրաստեն ապագա աշխատանքի եւ հետագա կյանքի: Ձեռք կբերես նոր ծանոթներ ու ընկերներ: Կունենաս բարձրագույն կամ մասնագիտական կրթության դիպլոմ, ինչը թույլ կտա հավակնել ավելի լավ աշխատանքի եւ առաջընթաց ունենալ հետագա կարիերայում:

Թերություններ. Ընտրության դժվարություն՝ ո՞ր ինստիտուտը/ համալսարանը ընտրել, ի՞նչ մասնագիտություն, ո՞ր քաղաքում: Եթե դու սովորում ես ոչ քո ուզած մասնագիտության գծով կամ համոզված ես, որ այն քեզ պետք չի գա հետագա կյանքում, եւ դու այդ ոլորտում չես աշխատելու, ապա վտանգ կա, որ իզուր կծախսես քո կյանքի ամենալավ տարիները:

Ուրեմն... Ինչ որոշում էլ ընդունես, հիշի'ր, որ դա պետք է լինի քո սեփական, իրազեկված որոշումը: Նախապես պարտադիր խորհրդակցիր ծնողներիդ, բարեկամներիդ, ընկերներիդ, ուսուցիչներիդ հետ, բայց աշխատիր ընդունել քո սեփական որոշումը:

Եվ իմացիր, որ դու միշտ էլ կարող ես «շտկել քո կյանքի սցենարը»: Մարդը մշտապես գտնվում է սեփական «ես»-ի, ցանկությունների ու հնարավորությունների, իր ուղու փնտրտուքի մեջ: Որ ուղին էլ ընտրես, հույս ունենք, որ քո մոտ ամեն ինչ կստացվի:

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

*☺ Վիրաբույժի մոտ.*
*- Բուժքույր, հիշեցրեք՝ ի՞նչ ունենք այսօրվա համար:*
*- Երեք դեպք է. երկուսը թեթեւ՝ ավտովթար եւ արտադրական վնասվածք, ու մի ծանր դեպք՝ ամուսինը հրաժարվել է լվանալ ամանները:*

*☺ - Թատրոնի հանդերձարանում, կինը՝ ամուսնուն.*
*- Ապուշ. ի՞նչ ես անում, հանդերձապահուհուն ինչո՞ւ 100 լարանոց թեյավճար տվեցիր:*
*- Տես՝ ի՞նչ մուշտակ է նա սխալմամբ տվել ինձ:*

*☺ Պարի ժամանակ տղամարդը, սիրալիր ու մեղմ իրեն սեղմելով կնոջը, շշնջաց.*
*- Ա՜խ, ինձ դրախտում եմ զգում:*
*- Իրոք, իսկ ես ինձ՝ ավտոբուսում:*

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



*☞ Հարկավոր է ուտել եւ խմել այնքան, որպեսզի մեր ուժերը դրանով վերականգնվեն, այլ ոչ թե սպառվեն:*
***ԱՎԻՑԵՆՆԱ***

*☞ Ավելի լավ է քիչ հասկանալ, քան հասկանալ ոչ ճիշտ:*
***ՊԼԱՏՈՆ***

*☞ Առանց ծնողների մենք ոչինչ ենք, իսկ նրանց շնորհիվ մենք ունենք ամեն ինչ:*
***ԱՆՏՈՒԱՆ ԴԸ ՍԵՆՏ-ԷՔԶՅՈՒՊԵՐԻ***

*☞ Ես ուզում եմ, որ մենք կարողանանք շնորհակալ լինել այն ամենի համար, ինչ մնացել է մեր թիկունքում: Թեկուզ, եթե դա տհաճ ու ցավոտ է եղել: Բայց դա հաստատ մեզ որեւէ կարեւոր բան է սովորեցրել:*
***Է.ՍԱՖԱՐԼԻ***

*☞ Երկրորդ երիտասարդությունը բավական հազվադեպ է վերադառնում, շատ հաճախ այն վերածվում է քրոնիկ մանկության:*
***Վ.ՄԱԼԽԱՍՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***
***Բաթումի***

## ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

# ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ ՈՉԻՆՉ ՉԻ ԽՆԱՅՈՒՄ»

### ՀԱՍՏԱՏՎԵՑ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

*Հունիսի 15-ին Հայաստանի ազգային ժողովում երկրի 2022 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության քննարկմանը վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ կառավարությունը ոչինչ չի խնայում Հայաստանի Զինված ուժերի համար:*



- Բանակի համար չենք խնայել ոչինչ: Ոչինչ, մինչեւ այս պահն էլ եմ ասել: Մենք վստահել ենք մեր բանակին: Ընդ որում, իմացել ենք քաղաքական կապվածության մասին, որոշ բաներ իմանալիս էլ աչք ենք փակել: Մենք վստահել ենք եւ չենք խնայել ոչինչ: 2018 թվականից մինչեւ այսօր չկա մի դեպք, որ բանակում որեւէ բան տեղի ունեցած չլինի այն պատճառով, որ կառավարությունը ասի փող չկա: Բացառված է: Չի կարող այդպիսի բան լինել,- ընդգծեց Նիկոլ Փաշինյանը:

Հունիսի 15-ին Հայաստանի ազգային ժողովը՝ 65 կողմ եւ 11 դեմ ձայներով, ընդունեց Հայաստանի 2022 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին որոշման նախագիծը: Նախագծին դեմ է քվեարկել «Հայաստան» խմբացությունը, իսկ «Պատիվ ունեմ»-ը չէր մասնակցում քվեարկությանը:

2022-ի սկզբին արվել էր 1 տրլն 947 մլրդ դրամի եկամուտների կանխատեսում, տարվա ընթացքում եկամուտներն ավելացել են 110 մլրդ դրամով: Իսկ ծախսերը պլանավորված են եղել 2 տրլն 184 մլրդ, ավելացել են 103 մլրդ դրամով: Արդյունքում պլանավորված դեֆիցիտը նվազել է 6,5 մլրդ դրամով:

# ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

*Հունիսի 14-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունեց Ռուսաստանի Դաշնության փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկին:*

Հանդիպմանը նշվեց, որ հայ-ռուսական հարաբերությունների օրակարգը հագեցած է, եւ ընթացիկ տարվա առաջին 5 ամիսների ընթացքում երկկողմ առեւտրաշրջանառությունն աճել է 96 տոկոսով:

Զրուցակիցներն անդրադարձան Հարավային Կովկասում տրանսպորտային եւ տնտեսական հաղորդուղիների ապաշրջափակման ուղղությամբ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի փոխվարչապետերի աշխատանքային խմբի շրջանակում տեղի ունեցած բանակցությունների արդյունքներին:

Այս համատեքստում քննարկվեցին երկաթուղային հաղորդակցության վերականգնմանը, կողմերի սուվերենության եւ իրավազորության հիման վրա սահմանային ու մաքսային հսկողության իրականացմանը վերաբերող հարցեր: Անդրադարձ կատարվեց նաեւ Հայաստանի եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի աշխատանքների շրջանակներում հայ-ռուսական հարաբերությունների արդիական հարցերին եւ ԵԱՏՄ ձեւաչափում համագործակցության զարգացմանն առնչվող թեմաներին:

# ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 8-ՐԴ ԽԱՂԵՐԸ ԿՄԵԿՆԱՐԿԵՆ ՕԳՈՍՏՈՍԻ 5-ԻՆ՝ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

### ԾՆՈՒՆԴՈՎ ԹԲԻԼԻՍՑԻ ՌԱՖԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՇՔԱՆՇԱՆՈՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Գործադիր կոմիտեի ընդլայնված նիստում «Ապավեն» տրանսպորտային ընկերության հիմնադիր եւ գլխավոր տնօրեն Ռաֆիկ Աղաջանյանը, Համահայկական խաղերի կազմակերպման եւ անցկացման գործում ներդրած ավանդի համար, պարգեւատրվեց Համահայկական խաղերի բարձրագույն շքանշանով:

Նույն օրը Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի Գործադիր կոմիտեի անդամներին ընդունեց Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը:

Հանդիպմանը Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանը Հայաստանի նախագահին ներկայացրեց Համահայկական ամառային 8-րդ խաղերի նախապատրաստման մանրամասները:

Վահագն Խաչատուրյանն իր խոսքում ընդգծեց Հայաստանում համահայկական խաղերի եւ ընդհանրապես սպորտային ու մշակութային լայնածավալ միջոցառումների անցկացման կարեւորությունը Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման եւ սերտացման համար:



Քննարկվեցին նաեւ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների առավել խորացման հնարավորություններն ու ուղղությունները:

Հայաստանի նախագահն անմիջական մթնոլորտում պատասխանեց ներկաներին հուզող հարցերին, անդրադարձավ համահայկական օրակարգային հարցերի շուրջ Հայաստանի եւ Սփյուռքի կառույցների միասնական ու ներդաշնակ դիրքորոշումների կարեւորությանը: Մտքեր փոխանակվեցին Հայաստանի պետական մարմինների եւ Սփյուռքի կառույցների փոխգործակցության մակարդակը հնարավորինս բարձրացնելու եւ արդյունավետ կառուցակարգերի ներդրման անհրաժեշտության մասին:

Գործադիր կոմիտեի ընդլայնված նիստին եւ անցկացված հանդիպումներին մասնակցեց Համահայկական խաղերի գործադիր կոմիտեի անդամ, Վրաստանի ներկայացուցիչ Վան Բայբուրթյանը:

# ՍԿՍՎԵԼ Է ԱՌԱՆՁԻՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՈՒՄԸ

*Հայաստանում նկատվում է գնաճի տեմպի դանդաղում, սպառողական շուկայում 12-ամսյա գնաճը կազմել է 1,3 տոկոս (2023-ի մայիսը 2022-ի մայիսի նկատմամբ), իսկ այս տարվա ապրիլի համեմատ, նկատվել է 1,8 տոկոսով նվազում: Փորձագետի գնահատմամբ՝ առաջիկա ամիսներին եւս գնաճի տեմպը կշարունակի դանդաղել:*

Սննդամթերքի եւ ոչ ալկոհոլային խմիչքների գները, նախորդ տարվա մայիսի համեմատ, նվազել են 2,1 տոկոսով: Իսկ միայն սննդամթերքի գները նվազել են 2,3 տոկոսով: Սննդամթերքի գները մայիսին նվազել են նաեւ նախորդ ամսվա՝ ապրիլի համեմատ՝ 4.2 տոկոսով:

Իսկ, օրինակ, ալկոհոլային խմիչքների, ծխախոտային արտադրատեսակների գները, նախորդ տարվա մայիսի համեմատ, աճել են 7,8 տոկոսով, հագուստի եւ կոշիկի գները՝ 6,2 տոկոսով:

Նախորդ տարվա մայիսի համեմատ, հացի գինն աճել է 0,2, իսկ ապրիլի համեմատ, նվազել է 1,4 տոկոսով: Նախորդ տարվա մայիսի համեմատ, ալյուրի եւ այլ ձավարեղենի գները նվազել են 12 տոկոսով, բրնձի գինը՝ 7,8 տոկոսով, մակարոնեղենինը՝ 4,1 տոկոսով: Ձվի գինը, սակայն, նույն ժամանակահատվածում աճել է 18,9 տոկոսով, կարագինը նվազել է 2,9, շաքարի գինը՝ 6,6 տոկոսով: Մսի գինն աճել է 5,8, ձիթապտղի յուղինը՝ 3,3 տոկոսով:

Նախորդ տարվա համադրելի ժամանակահատվածի համեմատ, գնաճն ապրիլին եղել է 3,2, մարտին՝ 5,4 տոկոս:

## ԷՐԴՈՂԱՆԸ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵՑ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

*Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Ադրբեջան կատարած այցից վերադառնալիս հայտարարել, որ հունիսի 3-ին Անկարայում իր երդմնակալության օրը կարճ հանդիպում ունեցավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:*

*- Այն, որ Փաշինյանն արձագանքեց մեր հրավերին, կարեւոր քայլ էր, Փաշինյանն ընդունեց մեր հրավերը՝ հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ: Ես շնորհակալություն հայտնեցի Փաշինյանին հրավերն ընդունելու համար,- թուրքական «Հյուրիեթ» պարբերականին տված զրույցում ասել է Էրդողանը:*

## «ՄԻ ԴՐԱՄԻ ՈՒԺԸ» ԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆ Է

*Իդրամի եւ IDBank-ի «Մի դրամի ուժը» նախաձեռնությունն արդեն 3 տարեկան է. այս ընթացքում ընկերությունները 20-ից ավելի հիմնադրամների են ուղղել ավելի քան 128 մլն դրամ եւ նպաստել ռազմավարական կարեւորության ծրագրերի իրականացմանը:*

*«Մի դրամի ուժը» 3 տարվա ընթացքում աջակցել է Լոռու եւ Տավուշի սահմանային գյուղերի դպրոցներին, «Հայաստան» Համահայկական հիմնադրամին, Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին, Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոնին, ՎԻՎԱ, «Վահե Մելիքսեթյան», Հայաստանի երեխաների առողջության, «Դասավանդի՛ր, Հայաստան», «Ժպիտների քաղաք» հիմնադրամներին եւ ուրիշներին:*

## ՀԱՅԿԱԿԱՆ «ARMSAT-1» ԱՐԲԱՆՅԱԿԸ ՊԱՏՐԱՍՏ Է ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ

*Հայաստանի տիեզերք արձակված առաջին արբանյակի՝ «ArmSat-1»-ի կառավարման կենտրոնը ամբողջությամբ կահավորված է եւ պատրաստ է շահագործման:*

*Հայաստանի առաջին արբանյակը «ArmSat-1»-ը տիեզերք է արձակվել 2022 թվականի մայիսի 25-ին: «ArmSat-1»-ի հաղորդած տեղեկությունները հասանելի կլինեն միայն Հայաստանին:*

*ԱՄՆ Կանավերալ հրվանդանից արբանյակի հաջող արձակումից հետո, SATLANTIS-ը հայտարարել է հայկական պետական «Գեոկոսմոս» ընկերության հետ համաձայնագիր կնքելու մասին, որով ընկերությանը տրամադրվում է Երկրի դիտարկման լիարժեք համակարգ:*

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՏԱՐՏԱՓՆԵՐԸ՝ ՓԱՐԻԶԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՈՒՄ

*Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում հունիսի 14-ին մեկնարկեց Եվրոպայի ամենախոշոր տեխնոլոգիական միջոցառումներից մեկը՝ «VivaTech-2023» 7-րդ ամենամյա միջազգային ցուցահանդեսը:*

*Այս տարի ցուցահանդեսին մասնակցում են «ՎիԱռԴրոբ», «Ադեւից», «ԴուՎորք Թեք», «ԷյԹի», «Դուդուկ», «ՖԲՖ», «Բլիինք», «ԵԻԱ ինժեներինգ», «Թեքստ Էնդ Փեյ Մի» ընկերությունները եւ ԱՏՁՄ-ն «Արմաթ» ծրագրով: Հայկական տեխնոլոգիական ընկերությունները ցուցադրեցին ոլորտի ներուժն ու նվաճումներն առողջապահական, կրթական, ձայնային տեխնոլոգիաների, երաժշտական վիզուալիզացիայի, ճարտարագիտության, ծրագրային եւ սարքային ապահովման, առցանց գնումների եւ վճարումների, էլեկտրոնիկայի, արհեստական բանականության եւ այլ ոլորտներում:*

*Միջոցառումը նաեւ հնարավորություն է ընձեռում այլ երկրների մասնակիցների գործունեությանն ու արտադրանքին ծանոթանալու եւ նրանց հետ փոխգործակցության նախադրյալներ ստեղծելու համար:*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՀՈՒՆԻՍ

***18.06.2023 Բարեկենդան Սուրբ Գրիգոր Լուսավորչի պահոց***

Բարեկենդանը պահքին նախորդող կիրակին է, որը նվիրված է Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքները գտնելու գյուտին:

***24.06.2023 Սուրբ Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտը***

Սուրբ Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտը հայոց ամենամեծ սրբի հիշատակին նվիրված երեք տոներից մեկն է: Տոնի օրը եկեղեցիներում մատուցվում է Սուրբ Պատարագ: Այս առիթով Հայոց եկեղեցին սահմանել է շաբաթապահք: Տոնն ունի նաեւ իր նախատոնակը:

ՍՊՈՐՏ

# ՖՈՒՏԲՈԼԻ ԵՎՐՈՊԱՅԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍԿՍՎԵԾԻՆ ՎՃՌՈՐՈՇ ԽԱՂԵՐԸ

### ԴԻՏԵՔ. ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔՈՎ, ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ, ԺԱՄԸ 22:45-ԻՆ, ՇՈՏԼԱՆԴԻԱ - ՎՐԱՍՏԱՆ ԽԱՂԸ

***Ինչպես արդեն հաղորդել ենք, ընթացիկ տարվա մարտին մեկնարկեցին ֆուտբոլի Եվրոպայի 2024 թվականի առաջնության որակավորման խմբային փուլի հանդիպումները:***

Վիճակագրությամբ որակավորման փուլի «A» խմբում Վրաստանի հավաքականի մրցակիցները Իսպանիայի, Նորվեգիայի, Շոտլանդիայի եւ Կիպրոսի հավաքականներն են: Խմբային փուլում Վրաստանի հավաքականն իր առաջին հանդիպումը սեփական հարկի տակ Նորվեգիայի հավաքականի հետ մրցամարտում ավարտեց ոչ-ոքի` 1:1: Այսօր` հունիսի 17-ին, վրաց ֆուտբոլիստները Կիպրոսում իրենց ուժերը կչափեն այդ երկրի ընտրանու հետ:

Հունիսի 20-ին խմբային փուլի երրորդ հանդիպումը Վրաստանի հավաքականը կրկին կանցկացնի մրցակցի դաշտում: Էդինբուրգում վրաց ֆուտբոլիստներն իրենց ուժերը կչափեն Շոտլանդիայի հավաքականի հետ: Խաղը ուղիղ եթերով կարող եք դիտել Վրաստանի հանրային հեռարձակողի առաջին ալիքով ժամը 22:45-ին:

Ինչ վերաբերում է Հայաստանի հավաքականին, ապա «D» խմբում նրա մրցակիցները Խորվաթիայի, Ուելսի, Թուրքիայի եւ Լատվիայի հավաքականներն են: Խմբային փուլի անդրանիկ հանդիպումը Հայաստանի հավաքականն անցկացրեց սեփական հարկի տակ եւ 1:2 հաշվով զիջեց Թուրքիայի հավաքականին:

Այսօր ուշ երեկոյան կայացավ Ուելս-Հայաստան հանդիպումը: Խմբային երրորդ հանդիպումը հունիսի 19-ին կանցկացվի Հայաստանում: Հայ ֆուտբոլիստների մրցակիցը Լիտվայի թիմն է:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

# «ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ»

***Նման վերնագրով հանդիպում կայացավ ընթացիկ տարվա հունիսի 11-ին, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի օրհնությամբ եւ թեմի երիտասարդական հարցերի նախաձեռնությամբ, «Գոլդեն տուլիպ դիզայն Թբիլիսի» հյուրանոցում:***



Միջոցառմանը մասնակցում էին Թբիլիսիի բարձրագույն ուսումնական հաստատությունների հայազգի ուսանողներ:

Այդ հանդիպումներում քննարկվում են այնպիսի կարեւոր հարցեր, ինչպիսիք են երկրում ընթացող գործընթացներին երիտասարդների մասնակցության, նրանց ինտեգրման աջակցության, վրացերենի տիրապետման կատարելագործման եւ որակյալ կրթություն ստանալու անհրաժեշտությունը:

Հանդիպումը վարեց Վրաստանի կառավարության խորհրդարանային քարտուղարի ծառայության առաջին կարգի խորհրդատու Կարեն Եղիազարյանը:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ




# ՀՈՒՆԻՍԻ 14-ԻՑ ԳՈՐԾԱՐԿՎԵՑ «ԵՐԵՎԱՆ-ԲԱԹՈՒՄԻ-ԵՐԵՎԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆ

***Հունիսի 7-ին Երեւանում կայացավ «Հարավկովկասյան երկաթուղի» (ՀԿԵ) եւ «Վրացական երկաթուղի» ընկերությունների ներկայացուցիչների հանդիպումը, որտեղ քննարկեցին երկու երկրների երկաթուղային կազմակերպությունների միջեւ առկա փոխգործակցության եւ առավել սերտ համագործակցության հնարավորությունները:***

Կողմերը պայմանավորվեցին նաեւ ուղեւորափոխադրումների 2023 թվականի ամառային սեզոնի մեկնարկի մասին:

Հունիսի 14-ից գործարկվեց «Երեւան-Բաթումի-Երեւան» միջազգային երթուղով երթեւեկությունը, տոմսերը հնարավոր է գնել ինչպես առցանց, այնպես էլ` Հայաստանի եւ Վրաստանի հիմնական կայարանների տոմսարկղերից: Գնացքը կշարժվի երկու օրը մեկ հաճախականությամբ: Ընդ որում, ամառային չվացուցակի ժամանակ կչեղարկվի «Երեւան-Թբիլիսի-Երեւան» երթուղու գնացքը:

Բացի այդ, կողմերը քննարկեցին 2023 թվականի 5 ամիսների ընթացքում «Հարավկովկասյան երկաթուղի» եւ «Վրացական երկաթուղի» ընկերության փոխգործակցության արդյունքները:

Նշվեց, որ 2022 թվականի աշխատանքի արդյունքներով, երկաթուղային տրանսպորտով Վրաստանի տարածքով տարանցիկ ճանապարհով Հայաստան է արտահանվել 451 հազար տոննա բեռ, Հայաստանից ներկրված բեռի ծավալը կազմել է 906 հազար տոննա: Նշված ժամանակահատվածում Վրաստանում գործող բեռնափոխադրողները ՀԿԵ ՓԲԸ-ի հաճախորդներին առաքել են 86,4 հազար տոննա բեռ (քվարցային ավազ, կրաքար, ամոնիումի նիտրատ, կլինկեր):

* * *

«Վրացական երկաթուղիները» լրացուցիչ երթուղիներ են նախատեսում դեպի Բաթումի: Թբիլիսիից ցերեկային երթուղիներն իրականացվում են հունիսի 14-ից եւ կշարունակվեն մինչեւ սեպտեմբերի 15-ը` ժամը 10:25-ը, իսկ Բաթումիից Թբիլիսի` ժամը 17:15-ին:

Կգործեն նաեւ գիշերային երթուղիներ: Մասնավորապես, հունիսի 16-ից սեպտեմբերի 15-ը Թբիլիսիից Բաթումի գնացքը կմեկնի ժամը 00:35-ին, իսկ Բաթումիից Թբիլիսի` 00:45-ին:



# ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Դդմից պատրաստված հայկական կերակրատեսակ: 7.Հայ մեծ բանաստեղծ: 11.Կահույքի մաս: 12.Բնակավայրի տեսակ: 15.Երիտասարդ հայ դերասանուհի, մոնոներկայացումների Նոբելյան մրցանակի դափնեկիր: 16.Ձմեռային պաշարների պահեստ: 17.«Զարկեցեք, դարբիններ, ...ը սալին» («Արտավազդ»): 19.Գանայի մայրաքաղաքը: 20.Իտալական ֆուտբոլային ակումբ: 21.Համադասական շաղկապ: 22.Մայր, մեծ մայր (բրբ): 24.Քաջ, անվախ: 25.Մեքսիկայի բնիկ ժողովուրդ: 26.Ամպի գոռոցը: 28.Իգական անուն: 31.Հայոց թագավոր: 33.Զորություն, ուժ չունեցող: 35.«Ցուրտը տարավ ... ու ձեռ» («Ճպուռն ու մրջյունը»): 36.Ոտաբաց: 38.Սիբիրը նվաճողը: 39.Ջիու «կոշիկը»: 42.«Ե'վ ... գիտե, ե'ւ սողալ»: 45.Բոլոր ցեղերի գլխավոր աստվածը: 48.Մարդկանց աշխատանքային որոշակի խումբ: 49.... եւ չգնալ: 50.Մրգի տեսակ: 51.Ծառի տեսակ: 53.Հումորիստ Սայաթ Հարությունյանի կեղծանունը: 54.Երաժշտական գործիք: 56.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 57.Պատ: 58.Տարիքով մարդ: 61.Ցուցական դերանուն: 62.Մենակ կատարողի երգը: 63.Օժանդակ բայ: 64.Հայկական տոմարի ամիս:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Լեռներ Հայաստանում: 3.Հայ աշուղ: 4.Ավստրիացի նշանավոր կոմպոզիտոր: 5.«Կուժն ..., ելա սարը» (Կոմիտաս): 6.Հայերիս նախահայրը: 7.Եմենի մայրաքաղաքը: 8.Ժխտական նախածանց: 9.Սիբիրի բնակիչ: 10.Երաժշտական հարվածային գործիք: 13.Անմար, պայծառ: 14.Հ.Մաթեւոսյանի ժողովածուներից: 18.Քաղաք Ֆրանսիայում: 22.Արաբական աշխարհում բնակվող: 23.Ճակատամարտի վայր Վրաստանում: 25....մաղ, ...ոտ: 27.Կպչուն միջատ: 29.Եվրասիական տնտեսական միություն: 30.Այծի ձայն հանելը: 31.Մակերեսի չափման միավոր: 32.Կուսակրոն քահանա (որոշյալ առումով): 34.Ֆրանսիական կայսր: 36.Ագահ, շատակեր, որկրամոլ: 37.Վրաց հանրահայտ երգչուհի, Ալ.Հեքիմյանի «Ձյունաթափ» երգի կատարողը: 40....ետիս, ...իաուղի, ...ետիք: 41.Մայիսյան հոտավետ ծաղիկ: 43.Հոգեկան, անմարմին, աննյութական: 44.Նույն անունն ունեցողներ (խոս.): 46.Որպիսություն, դրություն (բրբ.): 47.Ալ.Սպենդիարյանի օպերաներից: 48.Կավագործ: 52.Լուսաբաց, արեւածագ: 55.Նվազակցել, ... պահել: 59.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 60.Շորակեր միջատ:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Նջամենա: 7.Քենակալ: 9.Կոկտեյլ: 10.Ոգեշունչ: 13.Ռոպեներ: 16.Տարա: 18.Նինա: 20.Ամեոբա: 23.Ալվան: 25.Մուգ: 27.Դարան: 28.Կեմենի: 29.Տկլոր: 31.Գեշ: 32.Կուտի: 35.Վոլտոստ: 36.Լուրթ: 37.Ոսկի: 38.Համ: 41.Ազոխ: 43.Մակետ: 46.Բնիկ: 47.Ֆուձիյամա: 48.Ամիր: 49.Տիպիկ: 50.Թան: 51.Լիզ: 52.Սասատ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Անկապ: 3.Եղեռն: 4.Աքլոր: 5.Անգետ: 6.Շլաչ: 8.Կյուրի: 9.Կարկանդակ: 11.Շանթ: 12.Նան: 14.Ենո: 15.Եռալ: 17.Իսակով: 19.Արգիշտի: 21.Եփրատ: 22.Բանտ: 24.Ներողամիտ: 25.Մեգով: 26.Ունես: 30.Կարտոֆիլ: 33.Ութսունութ: 34.Իլիական: 39.Մայիս: 40.Դեմիս: 42.Խուրի: 44.Կապա: 45.Տակտ:

Գլխավոր խմբագիր` ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ` ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու` ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը` ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն` Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445